ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

գ. Ջրաբեր 03 փետրվարի 2025թ.

2025 թվականի փետրվարի 03-ին, ժամը 17.30-ին, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցեն՝ գ. Նուռնուս Գլխավոր փողոց 15 վարչական շենք) կայացավ «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Բյուրեղավան համայնքում գտնվող 07-051-0202-0042 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման վերաբերյալ հանրային լսումների 1-ին փուլը:

Մասնակցում էին՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Էդուարդ Մարգարյանը, ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վիգեն Ավետիսյանը, , Ջրաբերի վարչական ղեկավար Բորիկ Դավթյանը, Նուռնուսի վարչական ղեկավար Աղվան Հարությունյանը, Բյուրեղավանի համայնքապետարանի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Անդրանիկ Եղիազարյանը, աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետներ Հասմիկ Սիմոնյանը և Լիլիթ Ծատուրյանը, Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերի բնակիչներ (մասնակիցների ցուցակը կցվում է):

Օրակարգում՝

1. Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման համար հանրային լսումների 1-ին փուլ:

Լսեցին՝ բացման խոսքով հանդես եկավ Ջրաբերի վարչական ղեկավար Բ. Դավթյանը: Նա նշեց, որ «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու իրավունքի ձեռք բերման համար:

Այնուհետև «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Էդուարդ Մարգարյանը ներկայացրեց՝՝ քանի որ ընկերությանը պատկանող 8 հա հողակտորից 3,5 հա-ում կան օգտակար հանածոյի հաստատված պաշարներ, ընկերությունը ցանկանում է այդ տեղամասում իրականացնել արդյունահանման աշխատանքներ:

Եղան քննարկումներ բնակավայրերի բնակիչների և ընկերության ներկայացուցիչների միջև, որի արդյունքում բնակիչները միաձայն մերժեցին հանքավայրի արդյունահանման իրավունքի վերաբերյալ հայտը:

Քննարկումների պատասխանատու և վարող՝

Ջրաբերի վարչական ղեկավար՝ Բ. Դավթյան